

հայկական ներկայութեան մասին: Հայր Սուրբն իր խօսքն աւարտեց ըսելով. «Կը մաղթենք, որ խաղաղութիւն հաստատելու Ձեր ջանքերը յաջողութեամբ պսակուին եւ Սուրբ Երկրին մէջ բնակող բոլոր ազգերն ու կրօններու հետեւորդները ապրին խաղաղ ու բարգաւաճ միջավայրի մը մէջ»: Հանդիպմանը Պատրիարքութեանս կողմէ ներկայ էին՝ Ս. Յարութեան Տաճարի տեսուչ՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, Դիւանապետ՝ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան եւ Աւագ Թարգման՝ Տ. Տիրան Աբղ. Յակոբեան:

ԽՄԳ.

ԽՈՐՀՈՒՐԳ ԵՒ ԽՕՍՔ

Թշնամիիդ հազար առիթներ տուր բարեկամդ դառնալու, բայց բարեկամիդ նոյնիսկ մէկ առիթ մի՛ տար դառնալու թշնամիդ:

Իրա՛ւ բարեկամը աւելի շատ կը մտածէ իր պարտքը վերադարձնել, քան օտարը:

Սիրել անձ մը տարբեր չէ զԱստուած սիրելէ, այն տարբերութեամբ միայն, որ առաջինը միայնակ ալիք մըն է, մինչ երկրորդը՝ ամբողջ ովկէանոս մը:

Յաւը երբեմն երկնառաք բարիք մը, ու պարգեւ մըն է միանգամայն, տրուած անոր՝ որ գիտէ զայն վերածել ճամբու մը, իր առջեւ նորանոր հորիզոններ բացող:

Թէեւ սէրը կ'երջանկացնէ, սակայն միւս կողմէն նաեւ կը խաչէ:

Սէրը թեւն է գոր Աստուած տուած է հոգիին, մինչեւ իրեն բարձրանալու:

Սէր եւ վիշտ, ահաւասիկ խորունկ աղբիւրները երաժշտութեան, գրականութեան եւ աղօթքի:

Հոգին կ'երգէ երբ ուրախ է, որովհետեւ ուրախութիւնն ալ սէր է, որ կը սարսույց ի պատասխան փոխադարձուած սիրոյ, ըլլա՛յ ան մարդկային եւ կամ Աստուածային:

Հին Յունաստանի հովիւները իրենց տաւիղները կը կախէին ծառերու ճիւղերէն, որոնք երեկոյեան հովէն թրթռալով անտառը կը վերածէին ընդարձակ նուագահանդէսի մը:

Մեր հոգիները եւս, նման այդ տաւիղներուն, կախուած են երկրի եւ երկնքի միջեւ, եւ որոնք մեր կիրքերու անտառին մէջ կը հնչեն զիրենք գգուող դոյզն հովէն:

Թշնամի չունենալ՝ կը նշանակէ բարեկամներու արժանի չըլլալ:

Մեծ հոգիները ֆիզիքական ցաւերէ կը սոսկան, որովհետեւ իրենց մեծութիւնը հոն չեն կրնար կիրարկել:

Հաճոյքը աւելի կը յոգնեցնէ մարդը, քան գործը: